

«ՀԱՅ ԲՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ»

Յունուար 23ին «Հայ Բրիտտոնեայ Երիտասարդաց Առաքելութիւն Դէպի Հայաստան» ծրագրի ժողովը գումարուեցաւ Առաջնորդարանի մէջ: Արմինէ Սեմիրճեան տեղեկութիւններ հաղորդեց երիտասարդներուն եւ անոնց ծնողներուն՝ այս առաքելութեան նպատակի մասին: Այս առթիւ 5 երիտասարդներ արձանագրուեցան միանալու խումբին:

Այս տարուան այցելութիւնը պիտի տեւէ չորս շաբաթ՝ Յուլիս ամսուան մէջ: Երեք շաբաթ պիտի բնակին Երեւանի մէջ եւ շաբաթ մըն ալ Կիւնրիի մէջ ընտանիքներու մօտ, ուր ծրագիր մը պիտի իրականացնեն: Երիտասարդները ուխտաւորաբար պիտի այցելեն հայ վանքեր եւ եկեղեցիներ, պիտի այցելեն Արցախ, ընկերային հանդիպումներ պիտի ունենան զանազան խումբերու հետ, պիտի ունենան հոգեւոր նիւթերու շուրջ խորհրդածութիւններ: Այս առթիւ պիտի մշակեն նաեւ համայնքային այլ ծրագիրներ: Հայաստան մեկնող երիտասարդները նախապատրաստական հանդիպումներ պիտի ունենան: Աստուծոյ կամքով ճամբայ պիտի ելլեն Յուլիս 1ին եւ Լոս Անճելըս պիտի վերադառնան Յուլիս 30ին: